

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆ, ք.գ.թ.

ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան
գրականության ինստիտուտ

ԳՐԱԿԱՆԱԳԵՏ, ԹԱՐԳՄԱՆԻՉ, ԱՐՁԱԿԱԳԻՐ ՈՒ ԴՐԱՄԱՏՈՒՐԳ ԱԼԵԶԱՆԴՐ ԹՈՓՉՅԱՆԸ

Բանալի բառեր - Ալեքսանդր Թոփչյան, թարգմանիչ, արձակագիր, քննադատ, դրամատուրգ, գրական պրոցես, հոդված, վեպ, պիես:

Մեծ է Ալեքսանդր Թոփչյանի վաստակը հայ գրամշակութային կյանքում: Երբ ետահայաց նայում ես, տեսնում ես, թե ինչ հսկայական գործ է արել վաստակաշատ մտավորականը և ականա հարց է առաջանում՝ ինչպե՞ս է հասցրել: Ինքն իր անելիքը գիտեր և անխոնջ աշխատել է, շատերի նման չի թմբկահարել իր կատարած աշխատանքը և արժեքավոր ստեղծագործություններ պարզևել հայ գրականությանը:

Պետք է նշել, որ 1960-ականների սերունդը օրինված էր՝ ունենալով Ալեքսանդր Թոփչյանի նման գրականագետի: Ոչ միայն հետևում էր գրական գրական ընթացքին, այլև գրականագիտական խոհուն հայացքով հիմնավորում և մեկնաբանում էր նոր ստեղծագործությունները, ընդհանուր եզրեր գտնելով համաշխարհային գրականության հետ: Մի խոսքով՝ ինտելեկտուալ դպրոց էր ստեղծում Թոփչյանը, օժանդակում հայ գրողին նավարկելու համաշխարհային մտքի օվկիանոսում:

Մեծ ներդրում ունի նաև թարգմանական գործում: Հրաշալի տիրապետելով ֆրանսերենին՝ Թոփչյանը թարգմանում և մեկը մյուսի ետևից ընթերցողի սեղանին էր դնում համաշխարհային մեծության գրողների՝ հատուկ թիրախավորելով այն գրողներին, որոնք առաջին անգամ էին ներկայանում հայ ընթերցողին: Սա ևս նորի առջև ճանապարհ բացելու միտումն ուներ: Այսպես՝ Թոփչյանի շնորհիվ հայերեն են հնչել Դենի Դը Ռուժմոնը, Ֆիլիպ Կիդըլիեն, Ժան Պորտանտը, Լամբեր Ելեխտերը, Անիգ Կոլը, Շառլ-Ֆերդինանդ Ռամյուզը, Նի-

կոլա Բուվինեն և այլք: Նա առանձնահատուկ ուշադրություն է դարձրել նաև օտարագիր հայ գրողներին և թարգմանել նրանց ստեղծագործությունները: Մասնավորապես նրա շնորհիվ որակյալ թարգմանությամբ հայ ընթերցողին են ներկայացել Ժան-Բատիստ Բարոնյանը, Վահե Գոդելը:

1990-ական թվականներից Ալեքսանդր Թոփչյանը ներկայացավ հայ ընթերցողին նաև իբրև գրող: 1996 թվականին լույս տեսավ «Կիրկե կղզին» վեպը, որը հնի և նորի բախման խորհուրդն ունի: «Կիրկե կղզին» կարելի է համարել քաղաքային պարոդիա, քանի որ սուր շեշտադրումներով ներկայացվում են ժամանակի քաղաքական իրողությունների և քաղաքական այրերի պատկերները: Մյուս կողմից վեպը կարելի է համարել ժամանակագրություն և հրապարակագրություն: Ամեն դեպքում իմ կարծիքով Հայաստանի ոգեղեն տարածության փնտրտուքների մեջ Թոփչյանը Կիրկե կղզին նույնացնում է մեր նորանկախ պետության հետ: Չէ՞ որ մենք էլ կղզիացած ենք (չորս կողմից շրջափակման մեջ ենք) և ինչույքների ու գեի առօրյայի թնջուկում թմրած սպասում ենք թե ինչ տեղի կունենա մեզ հետ: Ներժանրային խայտաբղետ պատկերներով այս վեպը, անշուշտ, մտավոր հարուստ շերտեր է պահանջում ընթերցողից, որի շնորհիվ էլ բացահայտվում են այն խորաթափանց մտքերը և փիլիսոփայական հարցադրումները, որոնք կարևորել է Ալեքսանդր Թոփչյանը: Սա յուրօրինակ պոստմոդեռնիստական վեպ է, գործողությունները կատարվում են ներփակ քաղաքում, որը ժամանակի հորձանուտում, անընդհատ տենդային շարժման մեջ է, բայց ոչ մի էական ու կարևոր բան տեղի չի ունենում: Ահա մեր օրերի պատկերը: Այս վեպը Գուրգեն Խանջյանի և Լևոն Խեչոյանի վեպերի հետ միասին հայ պոստմոդեռնիստական արձակի երևելի իրողություններից կարելի է համարել:

2005 թվականին լույս տեսավ «Եվ անգամ մահից հետո» Ռուբեն Սևակին նվիրված կենսագրական վեպը, որի համար Թոփչյանն արժանացավ ՀՀ Նախագահի (այժմ Պողոսյան) մրցանակի: Այս վեպը (գրեթե 600 էջ), բացահայտում է Ռուբեն Սևակի կյանքի դրամատիկ իրողությունները, սակայն սոսկ կենսագրապատում չէ, քանզի հեղինակը կարողացել է կերպավորել Ռ. Սևակի ապրած ժամանակը, կատարել պատմաքաղաքական վերլուծություն և փորձել է գնահատել հայ ժողովրդի անցած ուղին այդ կարևոր և ճակատագրական

Ժամանակահատվածում: Ուստի դիպուկ է նկատել Ն. Կարախանյանը՝ վեպին տալով այսպիսի բնութագիր. «Ալեքսանդր Թոփչյանի վեպը զուտ կենսագրական վեպ (կենսագրավեպ) չէ, այլ միաժամանակ կարող է դիտարկվել և՛ փիլիսոփայական վեպ (վեպում կոմպոզիցիան համադրվում է հեղինակի փիլիսոփայական գաղափարների արծարծումների հետ), և՛ պատմավեպ (կենսագրական վեպն ըստ էության պատմավեպի ենթաժանր է), նրանում առկա են նաև քաղաքական վեպերի տարրեր (քաղաքական իրադարձությունների խոր և համակողմանի վերլուծությամբ)»¹: Այսինքն Թոփչյանը գրել է ազգային վեպ (հայ ժողովրդի կյանքի պատկերները, արհավիրքների միջով անցնելը), ինտելեկտուալ վեպ (համաշխարհային քաղաքականության իրողությունները), սիրավեպ (Սևակի մեծ սիրո պատմությունը), ողբերգական վեպ (մարդու, անհատի, մտավորականի չարչարանքներն ու նահատակությունը): Մի խոսքով Թոփչյանը գրել է մի քանի վեպ՝ մեկ վեպի տարածքում: Այս պարագայում ևս օգտագործել է արձակի տարբեր ժանրերի կիրառությունները՝ նամակագրություն, օրագրություն, կենսագրապատում, նոթագրություն և այլն:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի թոփչյանի «Բանկ օտոման» (Երևան, 2008 թ.) հերոսական-ողբերգական վեպը: Պատահական չի, որ վեպը թարգմանվեց ռուսերեն լեզվով և հրատարակվեց Մոսկվայում:

Ալեքսանդր Թոփչյանի «Բանկ Օտոման» վեպում անդրադարձել է իսկապես դժվար և քաղաքական առումով պայթյունավտանգ նյութի: «Բանկ Օտոմանի» գործողությունը գերազանցապես հայ ժողովրդի պատմության ցավալի դրվագներից է: Վեպում հեղինակն ընդամենը ներկայացնում է նախորդ դարասկզբի հայ քաղաքացիական շահագրգռությունները: «Բանկ Օտոմանում» պատկերվում է հայ երիտասարդների ըմբոստությունն ու դիմադրությունը՝ ընդդեմ 1894-1896 թթ. աբդուլհամիդյան ջարդերի: Այստեղ կա վրեժի գաղափարը և այն ենթատեքստային վստահությունը, որ հայ ազգը ուժեղ բազուկ ունի: Մանավանդ ժամանակներն այնպիսին էին, որ պետականություն չկար, Եվրոպան անառակաբար երկերեսանի վարք էր դրսևորում՝ իր հայանպաստ հայտարարություններով, բայց իրականում թուր-

¹Կարախանյան Ն., «Հայագիտական հանդես» № 2 (44), 2019, էջ 127-128:

քերին էր օգնում, իսկ Ռուսաստանն էլ այդ շրջանում բացահայտ հակահայկական քաղաքականություն էր վարում: Վեպում իրար զուգահեռ երեք գործողություններ են տեղի ունենում:

Վեպը նաև ծաղրական շեշտադրումներ ունի և հատկանշապան պատկեր է, երբ 1896թ. օգոստոսի 30-ին Կոստանդնուպոլսի տիրահռչակ «Ելըդզ» պալատում պիտի կայանա «կարմիր սուլթանի»՝ Աբդուլ Համիդ Երկրորդի գահակալության 20-ամյա տարելիցին նվիրված տոնակատարությունը, զվարճալի դեպքեր են տեղի ունենում: Դրանցից մեկն այն է, որ սուլթանին նվիրում են մի թուփակ, որն անընդհատ կրկնում է՝ «Կեցցե փառիշահը», ու այդ հայտարարությունը պիտի արտաբերի նաև տոնակատարության օրը: Հանկարծ թռչունը սատկում է, ու Օսմանյան կայսրության՝ աշխարհով մեկ ցրված պաշտոնյաներին հրաման է տրվում արագորեն Նոր թուփակ գտնել և ուղարկել Կոստանդնուպոլիս: Մեծ Բրիտանիայում անգլերեն ոչ մի բառ չիմացող թուրք դեսպանը՝ Մյուզիրիս փաշա անունով, մի հայիոյախոս թուփակ է գնում հարբեցող նավաստուց: Սուլթանը, որ կասկածամիտ մարդ էր, պահանջում է թարգմանիչ գտնել ու թարգմանել թուփակի ասածը: Ոչ ոք չի համարձակվում սարսափելի հայիոյանքները թարգմանել և թուփակը դառնում է թուրք պաշտոնյաների համար մի իսկական պատուհաս:

Ի վերջո գտնում են մեկին, որ համաձայնում է բարձր վարձատրության պարագայում թարգմանել թուփակի արտաբերած խոսքերը: Վերջինիս աչքերը փակած բերում են սուլթանի պալատ և երբ նա լսում է թռչունի արտաբերած հայիոյախառն նախադասությունը, ծիծաղից ուշաթափվում է՝ ինդրելով իրեն վաճառել այդ թուփակը: Հենց այդ պահին էլ ներս են մտնում սուլթանի մարդիկ ու հայտարարում, որ հայ վրիժառուները հարձակվել են «Բանկ Օտոմանի» վրա: Աբդուլ Համիդն այդպես էլ չի իմանում, թե ինչ էր ծրարում թուփակը, դեռ ավելին՝ նրա մյուս թուփակները ևս սկսում են հայիոյել:

Սրան զուգահեռ, «գնում» է «Բանկ Օտոմանի» ու հայ հեղափոխականների վրիժառության պատմության դիպաշարը:

Վեպի երրորդ ճյուղը ծավալվում է բանկերի կողոպտիչ, բազմաթիվ լեզուների տիրապետող, բանտում հայ հեղափո-

խականների հետ մտերմացած Ժան-Լյուկ Ռիվազի պատմությունը, որը հստակ հանձնարարությամբ եկել է Կոստանդնուպոլիս՝ թափանցելու «Բանկ Օտոման», որտեղ գտնվում է սուլթանի թանկարժեք քարերի հավաքածուն, այդ թվում 45 կարատանոց երկնագույն ադամանդը: 1896 թ. օգոստոսի 26-ին, փաղիչահի գահակալության հանդիսություններից 4 օր առաջ, միևնույն ժամին «Բանկ Օտոմանում» միաժամանակ հայտնվում են հեղափոխականներն ու օդեսացի դրամանենգները, բարձրաշխարհիկ պոռնիկն ու զեղծարար առևտրականը, նաև միջազգային ավանտյուրիստն ու շատ ուրիշներ, և սկսվում է «Բանկ Օտոման» գործողությունը... Բնականաբար այս խառնափնթոր ու խարդավանալից իրողություններում հայ երիտասարդները չպիտի հաջողեին:

Ուշագրավ է նաև Ալեքսանդր Թոփչյանի դրամատուրգիան: Այն, որ էպիկական մտածողություն ունի Թոփչյանը, հատկապես երևում են նրա պիեսներում: Ալեքսանդր Թոփչյանի «Արտագերս» դրաման պատմական հերոսական ուբերգություն է՝ 5-րդ դարի իրողությունների պատկերումով: Թվում է՝ ժամանակները նույնն են, և Հայաստանը վերածվել է մի նորօրյա Արտագերս ամրոցի:

Աբսուրդի թատրոնի մի յուրօրինակ նմուշ է Ալեքսանդր Թոփչյանի «Այնտեղ» պիեսը: Հեղինակը մեր մոլորակը նմանեցնում է մի լաբիրինթոսի, որտեղ խճճվել են մարդիկ: Անհայտ տեղանքն է պիեսի գեղարվեստական տարածությունը, որտեղ հերոսները հայտնվել են իրենք էլ չգիտեն ինչպես և ինչու: Նրանք անընդհատ ելք են որոնում ու օգնության են սպասում ինչ-որ տեղից: Սակայն այդ տեղանքի տիրակալը չարն է, որ պիեսում երևում է Պիտեկանտրոպի ծագի (որը խորհրդանշում է ավազակությունը որպես ամենժամանակյա երևույթ) միֆի տեսքով: Չարն ամենուր է, ներթափանցել է անգամ ժամանակի բովանդակության մեջ. «Ապագայի մասին ոչինչ չեմ կարող ասել, սակայն անցյալն իմն է ամբողջությամբ և, եթե կուզեք իմանալ, ինձ համար ապագան ևս անցյալ է»²:

Թերևս մեր օրերին բնորոշ խնդրի շուրջ է փորձել ծավալվել հեղինակը, ուստի այս միֆի կիրառումը զուտ գաղափարական դրսևորում ունի:

Ալեքսանդր Թոփչյանն առանձնահատուկ վերաբերմունք

² «Դրամատուրգիա», 2000, թիվ 1, էջ 55:

ունի նաև մոնոդրամայի ժանրի նկատմամբ: Նրա «Ե՛վ մարդ, և՛ աստված» մոնոդրամայում հերոսուհին՝ Մարիամը, շղթայված է և իր կենսագրությունն ու կրած տառապանքների մասին է պատմում: Սա տանջված ու տառապած (թե՛ հոգեպես և թե՛ ֆիզիկապես) կին-հերոսի ցայտուն օրինակ է: «Ե՛վ մարդ, և՛ Աստված» մոնոդրամայի հերոսուհի Մարիամը չի գտել ընտանեկան երջանկություն, հալածվել է ամուսնու կողմից՝ «այդ ծեծից հետո մեկ ամիս չէի կարողանում շարժվել»³, հոգեկից և հարազատ մեկին է փնտրում և ապավինում Աստծուն: Այս պիեսը կարելի է համարել նաև սուրբգրային դրամա, քանի որ հիմնված է քրիստոնեական-գաղափարական վեհ, վերերկրային ինչ-որ տեղ անգամ վերացարկված գաղափարների շուրջ:

Այն ունի նաև պատմական հիմք, քանզի «Ե՛վ մարդ, և՛ Աստված» մոնոդրամայի հիմքը «Շուշանիկի վարքն» է: Կրաց իշխանի կինը՝ հայազգի շղթայակապ Մարիամը, ով անմարդկային տանջանքներ է կրում ու մենախոսում Աստծո հետ: Նա ամեն չարչարանքի դիմացել է հանուն իր հավատի, հանուն քրիստոնեության: Մարիամի չարչարանքները երբեմն հիշեցնում են Հիսուսի տանջանքները: Հանուն հավատի նա ապրում է, որ կատարի առաքելությունը և պատվով կրի ի վերուստ իրեն տրված չարչարանքները:

Հատկապես արդիական շեշտադրումներ ունի Ալեքսանդր Թոփչյանի «Տականքի խոստովանությունը» («Գարուն», 2005, թիվ 6) մոնոդրաման, ժանրին բնորոշ վիպական զարգացումներով: Սակայն ամեն մենախոսություն չէ, որ մոնոդրամա է: Այս ժանրը ներքին հոգեբանական բախումների, ներանձնական իրավիճակների առատ հոսք է ենթադրում: Այս տեսանկյունից Թոփչյանի պիեսում կան որոշ թերացումներ, սակայն դրանք չեն ստվերում ստեղծագործության գեղարվեստական արժեքը: Հերոսը հոգեբանական խորք չունի, և նրա խոստովանությունը մերկապարանոց պատումի է վերածվում (սա թերևս հրապարակախոսական շերտեր է հաղորդում պիեսին): Խոստովանելով մեղքերը՝ նա իր կյանքի պատմությունն է անում և նշում, որ եղել է հարբեցող, խաղամոլ, թմրամոլ: Սակայն խոսքով նշել անցնելը բավարար չի կարող լինել, ավելի կարևոր է, թե հերոսը ինչ ներքին ապրումներ է ունեցել այդ ժամանակ, ինչ իրավիճա-

³ «Դրամատուրգիա», 2001-2002, թիվ 4-5, էջ 183:

կում է եղել, ինչ զգացողություններ է ունեցել: Սա է, որ, մեր կարծիքով, Ալ. Թոփչյանը չի կարողացել հանգամանորեն ցույց տալ: Գուցե միակ հերոսի կերպավորումների միջոցով՝ հարբեցողի, թմրամոլի, խաղամոլի դերերում ի հայտ բերելով, ավելի շատ բան կարողանար *ցույց տալ*, և ասելիքն ավելի շուտ տեղ կհասներ: Մյուս կողմից էլ սա արդեն բեմադրիչի գործն է, քանզի դրամատուրգիան ևս գրականություն է:

Ընդհանուր առմամբ՝ մոնոդրամաներին բնորոշ է գործողության պակասը. գրողն այդ բացը պետք է լրացնի կերպարաստեղծմամբ: Մեկ հերոսի բազմազան դրսևորումները նպաստում են մոնոդրամայի հաջողվածությանը և դիսամիկ բնույթ են հաղորդում վերջինիս: Ալ. Թոփչյանի հերոսը խոսքային զարգացում ունի, բայց իբրև ներկայություն հոգեբանական վիճակները ի ցույց դնող, թերի է, քանի որ դրամատուրգիայում հերոսը նախ և առաջ գործող անձ է:

Ալ. Թոփչյանը պարողիկ հետաքրքիր հնարք է կիրառում կերպարակերտման ժամանակ: Տականքը, ով զուրկ է ամեն մարդկային վեհ ու բարոյական հատկանիշներից և գռեհիկի կրողն է, մաքուր հայերենով և քաղաքակիրթ կերպով է մեղքերը խոստովանում. «*Այո Տեր, ես մեղավոր եմ, ես իսկապես հանցագործ եմ, ավելին՝ ոճրագործ, եղեռնագործ... Այո, կասեմ, չեմ վարանի... Ես զագրելի, եղկելի, եպերելի, նողկալի, պժգալի, քստմելի արարած եմ...*»⁴, իսկ երբ խոստովանության ժամանակն անցնում է, և նորից կյանքն է առջևում, ևս նույն անտակտ տականքին բնորոշ ձևով է խոսում. «*Այ դստե՛նց կկզրցնեմ սաղիդ՝ վերև ու ներքև... Հըմի հասկացա՞ք, որ մեր դեմ խաղ չկա*»⁵:

«Տականքի խոստովանությունը» բովանդակային առումով արդիական է: Դժվար չէ ի դեմս Տականքի տեսնել մոտ անցյալի և այսօրվա շատ պետական գործիչների: Այս առումով հեղինակին հաջողվել է ինչ-ինչ փաստերի (մոմի բիզնես, վառելիք, էներգիայի գաղտնի վաճառք, հայ կնոջ դուբայական ու թուրքական օգտագործումը որպես պետական անձի բիզնես, կաշառակերություն և այլ այլասերումներ) համադրմամբ մոտ անցյալի ժամանակային, կենսական և քաղաքական նկարագիրը տալ, ինչը պիեսի շահեկան կողմերից է:

Պիեսի ավարտը թերևս նորարարական է ստացվել:

⁴ «Գարուն», 2005, թիվ 6, էջ 42:

⁵ Նույն տեղում, էջ 49:

Ալ. Թոփչյանը դերասան-հանդիսատես սահմանը խզում է. «Սպասեք, սպասեք, էս ո՞ւր, ներկայացումը չի ավարտվել»⁶, դահլիճից դուրս եկող հանդիսատեսին ուղղակի դիմում է հերոսը: Սա հետմոդեռնիստներին բնորոշ հնարանք է, որի ակունքն է «կյանքը թատրոն է, մարդիկ դերասան» փիլիսոփայությունը:

Այսպիսով կարելի է ասել, որ ի դեմս Ալեքսանդր Թոփչյանի, հայ գրականությունը հաջողել է գրականագիտության մեջ, թարգմանության մեջ, արձակում և դրամատուրգիայում: Նրա թողած գրական հարուստ ժառանգությունը դեռ սերունդների հետ պիտի ճանապարհ անցնի:

ARMEN AVANESYAN - THE LITERARY CRITIC, TRANSLATOR, NOVELIST AND PLAYWRIGHT AL. TOPCHYAN

Alexander Topchyan's merit is huge and important in the Armenian literary and cultural life. The praiseworthy intellectual has done a tremendous work. As a literary critic he not only carefully followed the works of modern writers, but also justified and commented their works with his thoughtful literary view, finding common edges with the World literature. Having an excellent command of French, Topchyan was translating and introducing one after another the works of the world-renowned writers to the readers, especially targeting those that were new to the Armenian readers. The novel "Kirke Island" was published in 1996, which implies the symbol of the collision of the old and new. Then the biographical novel "And even after death" was published in 2005, dedicated to Ruben Sevak, for which Topchyan was awarded the RA Presidential Award (now Boghossian). The heroic-tragic novel "Bank Ottoman" (Yerevan, 2008) of Topchyan is worth of special attention. The novel has political-ironic highlights and in parallel with the plot is the story of the revenge of the "Bank Ottoman" and Armenian revolutionists. The dramaturgy of Al. Topchyan is also remarkable. The fact, that Topchyan has epic thinking is particularly seen in his plays.

Thus, we can say that the Armenian literature has succeeded in literature, in translation, in prose and dramaturgy in the name of Alexander Topchyan. The rich literary heritage he left will still educate many generations.

Key words: literary critic, prose, novel, translation, play, monodrama, absurd, myth, parody, genre, biography, ironic, figuration.

⁶ Նույն տեղում, էջ 50: